Արձանագրություն N 01
Ֆուտզալի Կոմիտեի Նիստի

30.11.2012 ք.Երևան

ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ՝ Ս. Ավետիսյան
ԱՆԴԱՄՆԵՐ ՝ Մ. Թաշչյան
Ռ.Նազարեթյան
Վ.Դանիելյան
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. Միքաելյան

ՕՐԱԿԱՐԳ

1. Ֆուտզալի բարձրագույն խմբի ս/թ 01.12.2012թ-ի կայանալիք Պոլիտեխնիկ(Երևան)-Թալ-գրիգ(Վանաձոր) խաղի հետաձգման վերաբերյալ քննարկում:
2. ՈՒԵՖԱ-ի կողմից ուղարկված կանանց ֆուտբոլի զարգացման ծրագրի քննարկում:
3. Կանանց ֆուտբոլի մարզիչների ընդունման քննարկում:
4. Որոշել 2011-2012թթ լավագույն ֆուտբոլիստ ընտրելու կարգը:
5. Այլ հարցեր.

- Առաջարկվեց ս/թ 01.12.2012թ-ի կայանալիք Պոլիտեխնիկ(Երևան)-Թալ-գրիգ(Վանաձոր) խաղը տեղափոխել 12/12/2012թ՝ Թալգրիգ ՖԱ-ի Նախագահ Թ.Գրիգորյանի 29/11/2012թ-ի ուղարկած գրության հիման վրա:
- Առաջարկվեց ՈՒԵՖԱ-ի կողմից ուղարկված ուղեցույցը և հաջորդ նիստին քննարկելու համար:
- Մ.Թաշչյանի կողմից առաջարկվեց ստուգել Քաղցրաշենի միջ.դպրոցի, Սիս Կիլիկիա ՖԱ-ի և Արթիկի մ/դպ Ա.Երիցյանի թիմերը, որից հետո ներկայացնել ՀՖՖ ղեկավարուտյանը աշխատանքի ընդունման վերաբերյալ:

- Ս.Ավետիսյանի կողմից առաջարկվեց վերանայել կանանց ֆուտբոլի փորձառու մարզիչների աշխատավարձների բարձրացման վերաբերյալ:
- Առաջարկվեց բարձրացնել ֆուտզալի բարձրագույն խմբի մրցավարների խաղերի սպասարկման գումարը:
- Ռ.Նազարեթյանի կողմից առաջարկվեց անցկացնել ֆուտզալի գավաթի մրցաշար՝ հունվար ամսին, ֆուտզալի բարձրագույն խմբերի միջև:
- Ս.Ավետիսյանի կողմից առաջարկվեց ստեղծել հանձնախումբ 2011-2012թթ. ՀՀ ֆուտզալի բարձրագույն խմբի լավագույն ֆուտբոլիստ ընտրելու համար:

Որոշվեց

- Պոլիտեխնիկ(Երևան)-Թալ-գրիգ(Վանաձոր) խաղը նշանակել 12/12/2012թ ժամը 14:00-ին :
- Ստուգելուց հետո ներկայացնել ՀՖՖ ղեկավարությանը աշխատանքի ընդունելու վերաբերյալ Քաղցրաշենի միջ.դպրոցի, Սիս Կիլիկիա ՖԱ-ի և Արթիկի մ/դպ-ի մարզիչներին:
- Կանանց ֆուտբոլի փորձառու մարզիչներ Լ.Հայրապետյանի և Գ.Ստեփանյանի աշխատավարձերի բարձացման վերաբերյալ դիմել ՀՖՖ ղեկավարությանը:
- Ֆուտզալի բարձրագույն խմբի մրցավարների խաղերի սպասարկման գումարի բարձրացնելու վերաբերյալ դիմել ՀՖՖ ղեկավարությանը:
- Անցկացնել 2013թ-ի հունվարի 12-17-ը ֆուտզալի գավաթի խաղարկություն, ՀՀ ֆուտզալի հավաքականի աշխարհի առաջնությանը նախապատրաստվելու համար:
- Կազմել հանձնախումբ հետևյալ հերթականությամբ: ֆուտզալի և կանանց կոմիտեի անդամներ.Ակումբի նախագահները, թիմերի մարզիչները և ավագները:

Միավորները գնահատվում են հետևյալ կարգով՝

1- տեղ	5 միավոր
2- տեղ	3 միավոր
3- տեղ	1 միավոր

Նախագահ	Ս.Ավետիսյան
Քարտուղար	Է.Միքաելյան